



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի հուլիսի 30-ի N 133-Ճ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ՀՀ հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի մայիսի 10-ի «Հաշվեքննիչ պալատի կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 2/2 որոշման հավելվածի 54-րդ և 55-րդ կետերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.
«54. Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը Հաշվեքննիչ պալատի կողմից սահմանված կարգով պատրաստված հաշվեքննության ընթացիկ եզրակացության նախագիծը, դրա և դրան կից ներկայացվող փաստաթղթերի պատրաստմանը ներկայացվող պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկանքը, ընթացիկ եզրակացության վերաբերյալ մամլո հաղորդագրության նախագիծը կամ մամլո հաղորդագրություն չներկայացնելու փաստը հիմնավորող տեղեկանքը, հաշվեքննության ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունների ու խեղաթյուրումների վերաբերյալ ամփոփ տեղեկանքը և ընթացիկ

եզրակացությանն ուղեկցող գրությունների նախագծերը զեկուցագրով ներկայացնում է տվյալ կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունը համակարգող Հաշվեքննիչ պալատի անդամին՝ վավերացման:

55. Վավերացնելուց հետո Հաշվեքննիչ պալատի անդամը ընթացիկ եզրակացության նախագիծը ներկայացնում է Հաշվեքննիչ պալատի հաստատմանը՝ միաժամանակ ներկայացնելով ընթացիկ եզրակացության կազմման համար հիմք հանդիսացող հաշվեքննության արձանագրություններն ու դրանց վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի առարկությունները և բացատրությունները, ընթացիկ եզրակացության և դրան կից ներկայացվող փաստաթղթերի պատրաստմանը ներկայացվող պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկանքը, ընթացիկ եզրակացության վերաբերյալ մամլո հաղորդագրության նախագիծը կամ մամլո հաղորդագրություն չներկայացնելու փաստը հիմնավորող տեղեկանքը, հաշվեքննության ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունների ու խեղաթյուրումների վերաբերյալ ամփոփ տեղեկանքը և ընթացիկ եզրակացությանն ուղեկցող գրությունների նախագծերը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱԿ



Լ. ՅՈԼՅԱՆ